

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Վիկտոր Հյուգոյս հայ գրականության մեջ» իմ աշխատության մասին «Տեղեկագրի» ս. թ. № 1-ում տպագրված գրախոսության հեղինակը (Ս. Շտիկյան) այնքան կոպիտ կերպով է ոտնահարել գրական-գիտական էթիկայի հանրաճանաչ և հանրապարտադիր կանոնները, որ լուծության մատենել անկարելի է:

Հենց սկզբից ասեմ, որ ես հեռու եմ այն մտքից, թե իմ աշխատությունը թերություններից զերծ է: Սակայն գրախոսության հեղինակն իր առջև խնդիր չի դրել տալ քննության առարկա գրքի անաչառ գնահատականը և նշել իրական թերությունները: Գիրքը լիովին արժեզրկելու նրա միտումը բացահայտ է: Գրախոսության հենց առաջին տողերում նա շտապում է «միանգամից» (իր բառն է) հայտարարել, որ «գործը... չի ստացվել» (էջ 91):

«Ի թիվս դրականի» գրախոսը բարեհաճում է միայն նշել, որ «հեղինակը կարողացել է մեր պարբերականներից դուրս բերել Հյուգոյի մի քանի նորահայտ թարգմանությունները...»: Այգբանն էլ շատ համարելով, ավելացնում է, որ «այդ գործը իրենց (") հիմնական մասով ժամանակին արել են Ղազիկյանն ու Հովհ. Պետրոսյանը իրենց հայտնի աշխատություններում» (էջ 91): Շարունակության մեջ գրախոսը գտնում է, որ իբր գրքի հեղինակը «սոսկ բավարարվել է» հայ գրողների և գործիչների «երկար-բարակ շարադրանքով», առանց իր ինքնուրույն խոսքն ասելու... (էջ 92):

Այսպիսով գրախոսը ճգնում է հավատացնել, թե «Վիկտոր Հյուգոյն հայ գրականության մեջ» գիրքը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունների մատենագիտական ցանկ և ֆրանսիացի մեծանուն գրողի մասին հայ գործիչների կարծիքների հավաքածու:

Դա բացահայտ անբարեխղճություն է, եթե չասենք ավելին: Ես իմ աշխատության մեջ, հատկապես «Վիկտոր Հյուգոյն հայ գրական մտքի գնահատմամբ» և «Վիկտոր Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունները» գլուխներում ձգտել եմ ցույց տալ, թե աշխարհահռչակ գրողի ստեղծագործությունները՝ հայերեն թարգմանությամբ և նրա ազատասիրական, հումանիստական գաղափարները ինչպիսի արձագանք էին գտնում հայ իրականության մեջ՝ մեր գրական-հասարակական զարգացման տվյալ ժամանակաշրջաններում (օրինակ՝ 60-ական թվականների դեմոկրատական շարժման և 70—80-ական թվականների ազգային-ազատագրական պայքարի ընթացքում):

Այլ խնդիր է, թե դա որքանով է ինձ հաջողվել: Ա՛յդ է, որ պետք է ցույց տար գրախոսը, և ոչ թե պնդեր, թե իբր ես միայն մատենագիտական ցանկ եմ կազմել՝ առս՛յց իմ ինքնուրույն խոսքն ասելու: Նա զարմանալի «հետևողականություն» է հանդես բերել իմ գիրքն իսպառ արժեզրկելու բացահայտ միտումի մեջ: Ժխտելով հեղինակի նույնիսկ «ինչ-որ բանի հասած լինելը», գրախոսը հանգում է «այն միակ ու վերջնական եզրակացության», որ «Վիկտոր Հյուգոյն հայ գրականության մեջ» թեման սպասում է իր ձեռնհաս քննադատին (էջ 95):

Իր այս կանխակալ եզրակացությունը «հիմնավորելու» համար զրախոսը դիմել է փաստերը խեղաթյուրելու, կեղծելու կամ պարզապես «սազացնելու» դատապարտելի «մեթոդին»:

ա) Գրախոսը ճգնում է ընթերցողին հավատացնել, որ ես, իբր, «հայ գրականության գրեթե բոլոր խոշոր ներկայացուցիչներին... առանց այլալայության» «հայտարարել» եմ «Հյուգոյի հետևորդներ»:

Մինչդեռ ես Հյուգոյի ազդեցության կապակցությամբ խոսում եմ միայն Ռինգ գրողի մասին՝ Րաֆֆի, Մերենց, Պետրոս Դուրյան, Թովմաս Թերզյան և Հովհ. Սեթյան: Միթե՞, ըստ Շտիկյանի, այս հինգն են «հայ գրականության գրեթե բոլոր խոշոր ներկայացուցիչները»:

Եվ ապա ես նրանց Հյուգոյի հետևորդները չեմ համարել, այլ ցույց եմ տվել գաղափարական և գեղարվեստական այն ընդհանրությունները, որ գոյություն ունեն մեծ ումանտիկի և հիշյալ հայ գրողների միջև: Ընդ որում ջանացել եմ բացահայտել այդ ընդհանրությունների մեջ իսկ եղող տարբերությունները, որոնց շնորհիվ տվյալ հայ հեղինակները (հատկապես Րաֆֆին, Մերենցն ու Դուրյանը) հանդես են եկել որպես ազդեցության մոմենտը հաղթահարած, ինքնուրույն խոսք ունեցող տաղանդավոր գրողներ:

Եթե հիշյալ գլխում առարկելի հարցադրումներ կան (և անշուշտ կարող են լինել), ապա գրախոսը պետք է անդրադառնար հենց դրանց, և ջանար իր սեփական տեսակետն առաջ քաշել: Բայց նա, ըստ երևույթին, որևէ տեսակետ չի ունեցել, և նվիրվել է արհեստականորեն քաղվածքներ իրար կարկատելու անուրջ գործին:

բ) Գրախոսը գրում է, թե ես չեմ հիշատակել Շիրվանզադեի կարծիքը Հյուգոյի մասին (էջ 92): Այնինչ գրքի 20-րդ էջում ասված է, որ Շիրվանզադեն, ումանտիզմը հնացած գրական ուղղություն համարելով հանդերձ, Հյուգոյին անվանում է «ֆրանսիական ումանտիզմի վերջին և ամենափայլուն դրոշակակիրը»: Նույն էջում հիշել եմ նաև «Մահապարտի վերջին օրը» վիպակի թարգմանության առթիվ Շիրվանզադեի գրախոսականը, որտեղ հայ ոեալիստ վիպասանը շատ բարձր է գնահատում Հյուգոյին:

գ) Ըստ Ս. Շտիկյանի, ես իբր խուսափել եմ Շիրվանզադեի պես գրական մեծություններին հակադրվելուց (նա օգտագործում է գիտական գրականությունը խորթ՝ «հաշիվներ մաքրել» արտահայտությունը...): Այստեղ ես գրախոսը մեղանշում է ճշմարտության դեմ: Ես չափազանցություն եմ համարել Շիրվանզադեի այն կարծիքը, թե՛ «բավական է մի թեթև համեմատություն, և հետաքրքիր ընթերցողը կգտնի Րաֆֆիի ոճի մեջ ահագին նմանություն՝ Վիկտոր Հյուգոյի ոճին» (էջ 226—227):

դ) Գրախոսը պնդում է, որ եթե Հյուգոյին քննադատողները «շատ էլ հանրահայտ անձնավորություններ չեն (օր. Գրիգոր Մսերյան), ապա հեղինակը հայտարարում է, որ նրանք սխալվել են, չեն հասկացել Հյուգոյին, չեն կարողացել ըմբռնել նրան և այլն» (էջ 92):

Իրականում, ես ո՛չ Գրիգոր Մսերյանի, ո՛չ էլ ուրիշ որևէ հայ գրողի մասին այդպիսի բան երբեք չեմ ասել: Սա ես՝ ճշմարտության դեմ Ս. Շտիկյանի կատարած մեղանշումներից մեկն է:

Գրքի բոլոր արժանիքները մինչև վերջ ժխտելու մոլուցքով տարված, գրախոսը անկարևոր է համարում իմ աշխատության վերջին գլխում բերված փաստերը Հյուգոյի և հայ գործիչների միջև փոխանակված նամակների մասին:

Գրախոսին, կարծում եմ, հայտնի պետք է լինի, որ մեծ գրողների մասին աշխարհի բոլոր լեզուներով գրված ուսումնասիրությունների հեղինակները շեն բաժանել նրա կարծիքը և անհրաժեշտ չափով կանգ են առել այդ գրողների՝ այլ ժողովուրդների գործիչների հետ ունեցած անձնական ու նամակագրական կապերի վրա:

Գրախոսի չափից ավելի հավակնոտությունն ու միտումնավորությունը հասնում է այն աստիճանի, որ կասկածի տակ է առնում իմ գրքի մյուս գրախոսների՝ դոկտոր-պրոֆեսորներ Ս. Արեշյանի, Ռ. Հովհաննիսյանի, եվրոպական գրականության դասախոս՝ ղոցենտ Ս. Սողոմոնյանի և գրքի խմբագրի՝ գրականագետ Ա. Ինճիկյանի գիտական բարեխղճությունը և նույնիսկ... ձեռնհասությունը: Մի շարք գրվատական խոսքեր ասելով նրանց հասցեին, ընդունելով նրանց «ամեն կասկածից վեր» «հայագիտական-բանասիրական կարողությունները», «փորձառությունը», որոնց «կատարած գործը արդեն որոշակի տեղ ունի հանրապետության գիտական կյանքում», այնուամենայնիվ, գրախոսը չի «ներում» նրանց, որովհետև իմ գրքի գնահատության հարցում բարձր կարծիք են հայտնել... Եթե այդպես է, գրախոսը, ոչ ավելի, ոչ պակաս, ուղղակի հայտարարում է, որ «ներանք վատ գիտեն Հյուզոյի և հայկական մշակույթի փոխհարաբերության հարցերը»: Ըստ գրախոսի «տրամաբանության», ով իր կարծիքին չէ, նա գիտնական չէ:

Բայց ինքը, Շտիկյանը, իրոք, ինչ չափով գիտե «Հյուզոյի և հայկական մշակույթի փոխհարաբերության հարցերը» (ըստ նրա գրախոսության):

1. Նա պնդում է, որ Հյուզոն 19-րդ դարի առաջին կեսի հայ ողմանտիկների կողմից «գրվատվեց ու մեծարվեց, արժանացավ ամենաբարձր հիացական գնահատականների» (էջ 91):

Մինչդեռ հայտնի է, որ հայ գրական գործիչները Հյուզոյի մասին գրել և նրա երկերը թարգմանել են սկսած 19-րդ դարի ոչ թե առաջին, այլ երկրորդ կեսից:

2. Նա պնդում է, որ «Հյուզոյի՝ հայ գրականության մեջ ներբողվելու գրական-քաղաքական ամենակարևոր դրդապատճառներից մեկը» այն էր, որ «Կրոմվելի» առաջաբանում նրա շարադրած ողմանտիկմի գեղագիտական հիմունքները «խստիվ» համահնչուն էին 19-րդ դարի առաջին կեսի հայ իրականության հետ» (էջ 91):

Հյուզոյի՝ հայ գրականության մեջ «ներբողվելու» գրական-քաղաքական ամենակարևոր պատճառները ոչ թե միայն նրա գեղագիտական հիմունքներն էին, այլև գերազանցապես նրա հումանիստական-ազատասիրական գաղափարները, սոցիալական առաջավոր հայացքներն ու ճնշված ժողովուրդներին ուղղած պայքարի կոչերը, որոնք իսկապես համահնչուն էին սուլթանական լծի տակ հեծող հայ ժողովրդի ստվար մասի մտավորականության տենչերին:

3. Գրախոսի կարծիքով, հայ ընթերցողը «մայրենի լեզվով չկարդաց «Աշնանային տերևներ», «Մթնշաղի երգեր» կամ «Ներքին ձայներ» խորագրերը կրող ժողովածուներում զետեղված Հյուզոյի բազմաթիվ բանաստեղծությունները, բայց դրա (•) փոխարեն մեծ մասամբ հայացվեց «Արևելյան» խորագիրը կրող ժողովածուն» (էջ 93):

Ընդհակառակը, «Աշնանային տերևներ» և «Մթնշաղի երգեր» ժողովածուներից ավելի շատ բանաստեղծություններ են թարգմանվել, քան «Արևելյան» ժողովածուից, որը բովանդակում էր սուլթանական բռնակալության դեմ բուռն

արտահայտությունները Ուրեմն պարզ է, որ գրաքննության ու հալածանքի պայմաններում այդ ժողովածուն չէր կարող «մեծ մասամբ» հայացվել: Ըստ ձեռքի տակ եղած փաստական անհերքելի տվյալների, «Արևելյան» ժողովածուից կատարված է ընդամենը 6 թարգմանություն, մինչդեռ «Մթնշաղի երգեր»-ից 15, իսկ «Աշնանային տերևներ»-ից 17 թարգմանություն...: Սակայն հայ դրական գործիչներն ամենից շատ թարգմանել են «Պատիժ» ժողովածուից, որի հիշատակությունն իսկ չի արել Ս. Շտիկյանը, հավանորեն անգիտանալով թե՛ այդ հուշակավոր հատորի գոյությունը և թե՛ դրանից կատարված բազմաթիվ թարգմանությունների կարևոր փաստը:

5. Գրախոսը պնդում է, որ Հյուգոյի «Բուրգրավներ» դրաման հայերեն չի թարգմանվել (էջ 93): Նա այդ պնդում է առանց տեղյակ լինելու, որ հիշյալ դրամայի հայերեն թարգմանությունը տպագրվել է 1904—1907 թթ. «Բազմավեպ» ամսագրում: Այդ մասին գրված է իմ աշխատության 166-րդ էջում. գրախոսը կամ չի կարդացել, կամ, ուրիշ փաստերի հետ, այդ ևս «մոռացել» է գրախոսությունը գրելիս:

6. Ս. Շտիկյանը գրում է, թե Հյուգոյի վեպերի մեջ «եղան այնպիսիները, որոնք երկու հրատարակություն ունեցան» (էջ 93), (խոսքը հայերեն թարգմանություններին է վերաբերում): Մինչդեռ հայտնի է, որ «Թշվառները» հրատարակվել է յոթ, իսկ «Իննսուներեքը»՝ վեց անգամ (տես իմ գրքի 137, 203, 145, 153, 202, 203 էջերը):

7. Գրախոսը «Ռյուի Բլաս» դրաման շփոթում է «Ժյուլ Բլյազի» (ճիշտ տառադարձությամբ՝ «Ժիլ Բլաս») հետ, չիմանալով, որ վերջինս ոչ թե դրամա է, այլ վեպ, պատկանում է ոչ թե Հյուգոյի, այլ Լեսսոթի գրչին... (էջ 93):

8. Գրախոսը մի անսպասելի գյուտ է անում, հայտարարելով, թե Հյուգոն մշակել է ֆրանսիական ժողովրդական էպոսը... (էջ 93):

Եթե Ս. Շտիկյանը մի փոքր ուշադիր կարդար իմ աշխատությունը և արհամարհանքով չվերաբերվեր այնտեղ եղած մատենագիտական տեղեկություններին, կշահեր գոնե այնքան, որ հիշյալ սխալներից մի քանիսը չէր գործի:

Սակայն գրախոսը, ցավոք, լավ չի կարդացել և ըմբռնել հենց Հյուգոյի ստեղծագործությունները: Այլ կերպ, նա առնվազն անհարմար պետք է զգար Հյուգոյի հումանիզմը մարմնավորող կերպարներից մեկին՝ Քլավդիմոգոյին որակել «այլանդակ ու ծուռտիկ մի հերոս» բառերով... (էջ 94):

Վերը բերված փաստերը, կարծում ենք, բավական են եզրակացնելու, որ գիտական բարեխղճությունից հեռու, միտումնավոր նման գրախոսականները ապակողմնորոշում են ընթերցողին, ո՛չ միայն ոչնչով չեն օգնում հեղինակին, այլև, ըստ էության, խանգարում են ճշմարիտ գիտական քննադատության զարգացմանը: